ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
NATIONAL ACADEMY OF SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ
"NATIONAL BUREAU OF EXPERTISES" SNPO

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
24 Tsovakal Isakov Ave. 0004, Yerevan

Հեռ՝ (37410) 777710
Тел: (37410) 777710
Fax: (37410) 777704

№ 05/264

10 06 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները (գնման հայտը կցվում է):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՓԱԲ-ՇՀԱՊՁԲ-(11/8)-14/7»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Իսակովի 24, 1-ին մասնաշենք N 16 սենյակ հասցեով, Ա. Խաչատրյանին (հեռ. (010)777710 (222)), մինչև 2014թ հունիսի 20-ը, ժամը 11:00-ը:

Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ք. Երևան, Իսակովի 24, 1-ին մասնաշենք N 16 սենյակ հասցեով, 2014թ. հունիսի 20-ի, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերումը, որը կազմված է14 չափաբաժնից: Ապրանքի գնման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցում):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում "Շրջանակային համաձայնագրեր" բաժնի "հրավերներում կատարված փոփոխություններ" ենթաբաժնում):

Սույն ծանուցմանը կցված գնման հայտում նշված համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի այն չափաբաժինների գծով, որոնցով սահմանված են ապրանքների ֆիրմային անվանումները, գնային առաջարկ ներկայացնելու դեպքում, մասնակիցները գնային առաջարկով համարժեք ապրանք առաջարկելու դեպքում ներկայացնում են նաև առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը և համառոտ տեխնիկական բնութագրերը:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Տնօրենի տեղակալ Ե. Զաղոյան